ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ք. Ս. ՏԵՐ-ԴԱՎԹՅԱՆ

Վարքը և վկայաբանությունը միջնադարյան գրականության ամենատարածված ժանրերից են։ Մեր իրականության մեջ սրբախոսական առաջին հուշարձանները երևան են եկել դեռևս հայ ինքնուրույն գրականության սկզբնավորման շրջանում, անցել են զարգացման երկար ուղի և նշանակալից դեր խաղացել գրական պրոցեսում։ Մեզ են հասել երկու տասնյակից ավելի ինքնուրույն հայկական վարքեր և շուրջ 200 վկայաբանություն։ Նրանց շարքում կան ստեղծագործություններ, որոնք ունեն գեղարվեստական բարձր արժեք և հայ միջնադարյան արձակի լավագույն նմուշներից են։ Այդ կարգի հուշարձաններից են Կորյունի «Վարք Մաշտոցին» (V դար), «Շուշանիկի վկայաբանությունը» (V դար), «Վահան Գողթնացու վկայաբանությունը» (VIII դար), Ներսես Շնորհալու և Գևորգ Սկևռացու վարքերը (XIII—XIV դդ.) և այլն։

Հայկական միջնադարյան ձեռագրերում պահպանվել են վարքերի և վկայաբանությունների հաջող սահմանումներ։ Դրանք պատկանում են հայսմավուրքային ժողովածուների կազմողներ և խմբագիրներ Հովսեփ Կոստանդնուպոլսեցուն (X դար) և Տեր Իսրայելին (XIII դար)։ Վերջինս, որն իր հիշատակարանում համարյա բառացի կրկնում է Հովսեփին, գրում է. «Բաց գիտել պարտ է, թէ այն, որ ասէ յիշատակ՝ միայն յիշատակ է սրբոց, զոր պատմութիւնն յիշէ վասն պիտոյից, իսկ այն, որ ասէ վարք՝ զայն յայտ առնէ, թէ առաքինութեամբ և հաճոյական վարուք ճգնեալ սուրբքն հանգեան ի Քրիստոս, իսկ որ ասէ վկայաբանութիւն՝ յայտ է, թէ արեամբ նահատակեալ սուրբքն վկայութեամբ կատարեցան ի Քրիստոս»[1]։

Հայ գրականության մեջ հանդիպում է վարքագրական հուշարձանի ևս մի տեսակ, որն իրենից ներկայացնում է սրբի վարքի և վկայաբանության միացում, ընդ որում երկի առաջին մասը սրբի վարքն է, երկրորդը՝ վկայաբանությունը։ Այդ կարգի հուշարձանների թվին է պատկանում, օրինակ, Գրիգոր Խլաթեցու հիշատակին նվիրված պատումը[2]։ Հաճախ վերնագրերում մատնանշվում է այդ տիպի պատումների բնույթը. օրինակ՝ «Պատմութիւն նորոգ վկային Յովսեփու վարուցն և նահատակութեանն վկայութիւնն»[3], «Վարք և նահատակութիւն սքանչելի առն աստուծոյ երանելի վարդապետին Գրիգորի Բալուեցւոյն»[4]։

Վերը բերված սահմանումների մեջ արդեն ընդգծված է վարքերի և վկայաբանությունների հիմնական տարբերությունը, ինչպես նաև նրանց հիմնական էությունը կազմող հատկությունը՝ այն, որ վարքը, վկայաբանությունը սովորական կենսագրություններ, պատումներ չեն, այլ՝ «սրբի», կատարյալ

---

1 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Ա, Երևան, 1955, էջ 481։ Վկայաբանությունները (վկա՝ հունարեն μαρτυρος բառից) երևան են եկել քրիստոնեության մեծ հալածանքների շրջանում։ Քրիստոնեության պաշտոնական ճանաչումից հետո (313 թ.) արևելահռոմեական (բյուզանդական) գրականության մեջ արագ թափով սկսում է զարգանալ վարքագրությունը՝ վկայաբանություններից խլելով նրանց առաջնակարգ դերը։

2 «Հայոց նոր վկաները (1155—1843)», աշխ. Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի. Վաղարշապատ, 1903, էջ 264—274։

3 Նույն տեղում, էջ 46։

4 Նույն տեղում, էջ 104։

մարդու։ Նման տիպի ստեղծագործության մեջ առանցքայինը հերոսի կերպավորման հարցն է, որի հետ կապված և որով պայմանավորված են մնացած բոլոր հարցերը (երկի կառուցվածք, արտահայտչամիջոցներ և այլն)։

Իրենց հերոսներին բարձրացնելու, սրբացնելու համար վարքագիրներն ու վկայագիրները գեղարվեստական արտահայտչամիջոցներն ու հնարանքները վերցնում էին նույն զինանոցից, սակայն ընտրովի, յուրաքանչյուրն իր հերոսի դերին համապատասխան։

Այս հոդվածում մենք կանգ կառնենք միայն վկայաբանության ժանրի վրա, կաշխատենք ցույց տալ հայ վկայաբանության յուրահատկությունները և նրա զարգացման ուղին։

* * *

«Վկայություն» հասկացությունը առաջ է եկել «վկա» բառից, որը հունարեն «μάρτυρας»-ի (մարտիրոսի) զուգահեռն է։ «Մարտիրոսը» նախապես համապատասխանել է «վկա» բառի բուն իմաստին։ Միայն II—III դդ. քրիստոնեական գրվածքներում է, որ «վկա» բառը ձեռք է բերում «նահատակ» իմաստը[5]։ Վկայաբանական ժանրի ձևավորումը սերտորեն կապված է վկայության (այսինքն նահատակության) տեսության հետ։ Այդ տեսության հեղինակները՝ առաջին քրիստոնյա փիլիսոփաներ Կղեմես Աղեքսանդրացին (150—215) և Որոգինեսը (185—253) իրենց աստվածաբանական երկերում քրիստոնյաներին բաժանում են կատարյալների և ոչ կատարյալների։ Կատարյալ քրիստոնյան նա է, ով անելիք հավատում է աստծուն և զոհաբերում իրեն հանուն նրա սիրո[6]։ Միայն նա, ով չգիտե, որ մահը սոսկ մարմնից աղատագրվելու և երկնային իր էությանը միանալու, հավերժություն փոխադրվելու ճանապարհ է՝ կարող է վախենալ մահվանից։ Ստեփանոս վարդապետ և Պետրոս խիղանցիների վկայաբանության մեջ (1424 թ., հեղինակ՝ Առաքել Բաղիշեցի) ուղղակի մատնանշվում է այդ տեսության աղբյուրը. «Մեծն Յովհաննէս... հրամայէ ի գիրս կաթողիկէիցն թէ «երկիւղ ոչ գոյ ի սէրն. վասն զի սէր կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն»[7]։ Ըստ Եղիշեի, վախը թերահավատության նշան է։ Եղիշեն ապավինում է այդ տեսությանը, փառաբանելով պարսիկների դեմ մղված պատերազմում ընկած զորավարներին և զինվորներին. «Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի, և յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց զոզայ. Երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում. և յանգիւտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում։ Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ»[8]։ Դավանափոխ եղած և քրիստոնեություն ընդունած մոգպետներից մեկը երագում է ժամ առաջ հասնել կատարելության. «Ե՞րբ իցէ,— ասում է նա,— զի ելից ի թանձրագանդաղ ձանձրալի մարմնոյս այսորիկ. ե՞րբ իցէ, զի աներկիւղ եղեց ի մահուանէ։ Ե՞րբ իցէ, զի տգիտութիւնս իմ հասցէ ի կատարեալ գիտութիւն»[9]։

Ահա այդպիսի կատարելության, աստծո իմացության, նրա հաստատակամ խոստովանության գաղափարն է ընկած վկայաբանության հիմքում։

---

5 Μάρτυρας բառի մասին մանրամասն տե՛ս Т. В. Попова. Античная биография и византийская агиография.—«Античность и Византия». М., 1975, с. 262.

6 Վկայության տեսության մասին տե՛ս П. Безобразов. Византийские сказания. Юрьев, 1917, с. 275—287.

7 «Հայոց նոր վկաներ», էջ 245։

8 «Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին», աշխ. Ե. Տեր-Մինասեան. Երևան, 1957, էջ 14։

9 Նույն տեղում, էջ 155։

Ստորև կաշխատենք ցույց տալ, թե ինչպիսի սերտ կապ կա վկայության տեսության և վկայաբանական ժանրի միջև։

Տվյալ գրական տեսակում ամեն ինչ ծառայում է հերոսի կատարելության բացահայտմանը։ Հերոսի կերպավորման գլխավոր սկզբունքը նրա իդեալականացումն է։ Սրանով էր պայմանավորված որոշակի կանոնների և գեղարվեստական արտահայտչամիջոցների մշակումը, կերպարների պայմանականությունը և կայունությունը։ Հերոսի իդեալականացման սկզբունքից են բխում վկայաբանության կառուցվածքային, ձևական յուրահատկությունները։

Եթե վկայաբանությունը (ինչպես և վարքը) պատում է կատարյալ մարդու մասին, ապա նա չպետք է ունենա և ոչ մի բիծ, ոչ մի բացասական հատկանիշ։ Այստեղից էլ բխում է վկայաբանական հերոսների կերպավորման ուղղագծությունը, միակողմանիությունը. դրական հերոսը չէր կարող ունենալ որևէ բացասական հատկանիշ, իսկ բացասականը՝ որևէ դրական։ Իդեալական, կատարյալ հերոսը պետք է վեր բարձրացված լիներ կենցաղային առօրյայից, որը նրան կդասեր սովորական մահկանացուների շարքը։ Այդ պատճառով նշված ժանրին պատկանող երկերում, տվյալ դեպքում, բացակայում է կենցաղը և վկայաբանական հերոսը ապրում և գործում է ինչ-որ չափով պայմանական, իրականությունից կտրված միջավայրում։ Ամենուր, թե՛ հերոսի կերպավորման, թե՛ շրջապատի նկարագրության մեջ տիրում է ծայրահեղության ոգին։ Այլ կերպ ասած, հերոսի կերպավորման մեջ ի հայտ է դուրս գալիս վերացականության միտումը, որը հանգեցնում է պայմանական վկայաբանական կերպարի մշակմանը։

Ի տարբերություն վարքի, վկայաբանությունը սյուժետային պատում է։ Սրա հիմքում ընկած է վկայի դավանափոխության հարցը։ Մի փոքր նախադրությունից հետո անմիջապես ծագում է կոնֆլիկտը, հակասությունը հերոսի և արտաքին ուժերի՝ քրիստոնյաների և հեթանոսների, իսկ ավելի ուշ շրջանի վկայաբանություններում՝ քրիստոնյայի և այլադավանների միջև։ Հեթանոս թագավորը կամ բռնակալը պահանջում է, որ քրիստոնյան դավանափոխ լինի։ Վկան կայուն է։ Տիրակալը, տեսնելով, որ ոչ մի բանով հնարավոր չէ գայթակղել նրան, դիմում է ահաբեկման։ Վկայաբանական հերոսը ենթարկվում է անասելի տանջանքների և ցուցաբերելով աննկուն կամք և անհողդողդ ոգի՝ նահատակվում է հանուն Քրիստոսի[10]։

Վկայաբանությունների այդ կառուցվածքի համար հիմք հանդիսացան հնագույն, այսպես կոչված, «իրական ակտերը», որոնք կրում էին զուտ դատական հետաքննության բնույթ՝ կազմված նահատակությանը նախորդող դեպքերի նկարագրությունից, հարցաքննությունից և մահապատժից[11]։ Հետագա վկայաբանությունների կառուցվածքում այդ հնագույն «ակտերի» երեք բաղկացուցիչ մասերը ամենակայունն ու անփոփոխն են։ Դրա հետ միասին վկայաբանական ժանրը որդեգրեց «ակտերի» դատաքննչական պրակտիկայից յուրացրած երկխոսության ձևը իր պարզունակ շարահյուսությամբ («դատավորն ասէր», «սուրբն պատասխանէր» և այլն)։ Շատ բան պարզաբանվում է խոստկության և գործողության միջոցով։ Դրա շնորհիվ վկայաբանությունները վարքերի համեմատությամբ ունեն ավելի դինամիկ ու սուր զարգացում։ Սակայն սյուժեն այստեղ նորության, անսպասելիության ակնկալություն չի պարունակում։ Ամեն ինչ հայտնի է նախապես՝ վկան ստիպված ընտրյալն է և նրա մահը աղդարարում է հաղթանակը թշնամիների հանդեպ։ Սա ամենընդհանուր ձևով։ Սակայն, եթե կամենանք մի քիչ խորանալ, ապա կտեսնենք, որ վկայաբանությունը ունի հերոսի կերպավորման, նրա էության լիարժեք դրսևորման հատուկ միջոցներ, որոնք և դարձել են վկայաբանական ժանրի

---

10 Վարքի և վկայաբանության տարբերակիչ գծերի մասին տե՛ս Մ. Ավագյան. Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը. Երևան, 1971, էջ 74—77։

11 Տե՛ս П. Безобразов. Византийские сказания. Гл. V, Протоколы, с. 109—142; Х. Лопарев. Греческие жития святых VIII и IX веков. Ч. I, Петроград, 1914, с. 1.

անփոփոխ հատկանիշները։ Նրանցով են պայմանավորված վկայաբանության կառուցվածքի տարբեր մասերի հարաբերակցությունը և հերոսներին բաշխված դերը։

Դրանց շարքում ամենակարևոր տեղն է գրավում վկայի տանջանքների և խոշտանգումների բազմատեսակությունը, մի քանի փուլով ներկայացվող նկարագրությունը։ Հիշենք Թեկուզ Գրիգոր Լուսավորչի տանջանքների ագաթանգեղյան նկարագրության դրվագները, ուր Տրդատ թագավորը Գրիգորին, նախքան խորվիրապ գցելը, չորս օր շարունակ ենթարկում է 12 տեսակի ամենադաժան և անհավատալի տանջանքների[12]։ Թվում է, թե խոշտանգված վկան արդեն մահացել է, սակայն «աստծո խնամքով» նա շարունակում է ապրել՝ անհավատներին ապացուցելու համար աստծու և նրա սիրեցյալների զորությունը։ Վկան ընկճվելու, հուսահատվելու փոխարեն ավելի է ամրանում, հաստատվում իր հավատի մեջ և նույնիսկ խնդրում ավելի սաստկացնել տանջանքները, որպեսզի կարողանա արժանանալ ավելի մեծ պարգևների։ Հռիփսիմեն, երբ որոշում են նրա լեզուն կտրել, ուրախությամբ բացում է բերանը։ Աբրահամ և Խորեն խոստովանողները, երբ դահճապետը կտրում է նրանց ականջները, թախանձում են կտրել նաև քթերը[13]։ Վահան Գողթնացին, երբ բանտում նրա մի ոտքը ամրացնում են կոճղին, խնդրում է, որ ամրացնեն նաև երկրորդը[14] և այլն։

Այն, ինչ ժամանակակից գեղարվեստականության չափանիշների տեսակետից կարող է թվալ անընդունելի, միջնադարում եղել է վկայաբանության ժանրի ամենաբնորոշ գեղարվեստական հնարանքներից մեկը և բխել է վկայության տեսության պահանջներից։ Խիստ չափպանցված չարչարանքների նկարագրությունները կոչված էին դրսևորելու վկայի կատարելությունը և նրա անդրդվելի հավատը։ Ըստ այդմ էլ վկայաբանության մեջ վկայի հարցաքննությանն, նրա տանջանքների դրվագները, մահապատժի նկարագրության հետ, ամենամեծ տեղն են գրավում։

Սակայն եթե մի կողմից վկայի կերպարը դրսևորվում է արտաքին բախումների միջոցով, ապա մյուս կողմից դրան է ծառայում նրա ներքին նախապատրաստումը նահատակության ասպարեզ դուրս գալուն, քանի որ առանց ներքնապես մաքրվելու, ամեն տեսակ երկրայինից և մարմնավորից ազատագրվելու նա ընդունակ չէր լինի կատարելու վկայության սխրանքը։ Այդ պատճառով վկայաբանություններում բավական տեղ են գրավում վկայի աղոթքները, ապաշխարությունը, ճգնակեցությունը, հրաժարումը աշխարհիկ կյանքից և այլն։ Նա հոգեպես մաքրվում է, ամբողջությամբ համակվում վկայություն ընդունելու գաղափարով, և այլևս նրան չի հետաքրքրում ոչ մի երկրային միտք։ Երկար ժամանակ վանքերում ապաշխարելուց և իր մեղքերը քավելուց հետո, Վահան Գողթնացին, ըստ վկայագրի, «արտաքոյ մարմնոյ ընդիմանալիսն լինելով»[15], որոշում է ընդունում գնալ Արաբական խալիֆայություն, ուր նրան նահատակություն էր սպասում։

Այս առումով վարքագրական հերոսը մեծ ընդհանրություն ունի վկայաբանականի հետ։ Եվ պատահական չէ, որ ձեռագրերում նրանք հաճախ նույնացվում են, և առաջինը դիտվում է որպես «աստծուն անարյուն զոհ մատուցող»։ Երկուսն էլ ներքնապես պայքարում են երկրայինից ազատագրվելու համար։ Վարքագրական հերոսը, վկայաբանականի նման, անցել է այդ պայքարի առաջին՝ ներքնապես մաքրվելու, մարմնավորը իր մեջ մահացնելու աստիճանը և ընդունակ է վկայության սխրանքի, որն արդեն կատարելության գերագույն արտահայտությունն է։

---

12 Տե՛ս «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց». Թիֆլիս, 1914, էջ 63—70, 102—121 հատվածները։

13 Տե՛ս նույն տեղում, էջ 106։

14 Տե՛ս «Սոփերք հայկականք». հ. ԺԳ, Վենետիկ, 1854, էջ 43։

15 Նույն տեղում, էջ 31։

Հերոսի կերպավորման հարցի հետ է առնչվում նաև վկայաբանության մեջ գործող անձանց հատկացված դերը։ Այստեղ առկա են «չարի գործակիցները» և վկան, դրական հերոսը և բացասականները, իրար հակադրված չարի և բարու մարմնավորումները։ Ժողովուրդը, վկային շրջապատող քրիստոնյաները կատարում են հանդիսատեսի դեր։ Իրականում վկայաբանությունը պատում է մեկ հերոսի մասին։ Նրան տանջողները իրենց գերով գրեթե հավասարեցված են ժողովրդին։ Նրանք միաժամանակ հանդիսատեսներ են, որոնց բացասական վերաբերմունքը (զայրույթ, սարսափ) նրա սխրանքի հանդեպ ծառայում է նույն նպատակին՝ հերոսի էության բացահայտմանը։

Ժողովուրդը անջատված է վկայից անհաղթահարելի պատնեշով և վերջինիս սխրանքը գիտում է կարեկցանքով ու երկյուղածությամբ, քաջ գիտակցելով այդ սխրանքի մեծությունը։ Նրա ներկայությունը նույնպես անհրաժեշտ է վկային բարձրացնելու, սրբացնելու համար։ Հենց այդ պատճառով վկան երբեք մեկուսի չի ենթարկվում տանջանքների և նահատակվում, այլ այդ պահերին նրան միշտ ուղեկցում է հավատացյալների և անհավատների հոծ բազմությունն։ Ժողովրդի վերաբերմունքը, կարեկցանքը վկայի հանդեպ, տանջանքների և մահվան ընկալումը, վկայից ստացած տպավորությունը նրա կերպարի դրսևորման «անուղղակի բնութագրման»[16] միջոց են։

Նման նպատակ են հետապնդում նաև տեսիլքները և հրաշագործությունները, որոնք վկայաբանությունների անքակտելի մասն են կազմում։ Տեսիլքները վկայաբանության ամենակայուն տարրը եղան նրա գոյատևման գրեթե ամբողջ ընթացքում։ Նրանք կորցրեցին սկզբնական շրջանի իրենց ֆանտաստիկ-հեքիաթային նկարագիրը, սակայն մշակվեց վկայի մահվան և նրա մասունքների հետ կապված՝ վկայաբանությունից վկայաբանություն անցնող տեսիլքների և հրաշքների միօրինակ պատում, որին տուրք տվեցին նույնիսկ XVI—XVII դդ. պատմագիրներ Առաքել Դավրիժեցին և Զաքարիա Քանաքեռցին։ Սովորաբար, երբ վկան մահանում է, նրա դեմքը պայծառանում է։ Նրա մարմնին երկնային լույս է իջնում։ Ոչ մի կենդանի՝ թռչուն, գազան կամ շուն չեն կարողանում մոտենալ սրբի մարմնին։ Ահաբեկված այդ տեսիլքով՝ մահմեդականները թույլ են տալիս քրիստոնյաներին վերցնել վկայի մարմինը և հանդիսավորությամբ թաղել, իսկ ապագայում նաև նրանց աճյունի վրա մատուռ կամ եկեղեցի կառուցել։

Սրանք են վկայաբանության ժանրի կայուն հատկանիշները։ Սակայն կյանքը, հասարակական կեցությունը, ժողովրդի պատմությունը, ժամանակը և այլ հանգամանքներ իրենց ներգործությունն են ունեցել վկայաբանության վրա, սրբագրել այդ կանոնները և հարմարեցրել կյանքից բխող պահանջներին։

Վկայաբանության զարգացումը հայկական հողի վրա զգալիորեն պայմանավորված է եղել ժողովրդի ողբերգական պատմությամբ։ Եթե Արևելա-հռոմեական կայսրությունում քրիստոնեության պաշտոնական ճանաչումից հետո արագ թափով զարգացող վարքագրության կողմից այն մղվեց հետին շարք, ապա Հայաստանում վկայաբանությունը վարքի կողքին և նրանից էլ ավելի բուռն շարունակում է զարգանալ ընդհուպ մինչև XVIII դարը։ Դրա շնորհիվ էլ հայ վկայաբանական գրականությունը առատ նյութ է պարունակում ժանրի և նրա հետագա զարգացման ուսումնասիրման համար։

Դեռևս III—IV դդ. քրիստոնեական ուսմունքի հետ թափանցելով Հայաստան՝ վկայաբանությունը որդեգրվեց որպես հայ ժողովրդի ազատագրական պայքարի գրականություն։ V դարից սկսած վկայաբանություններում արտացոլվել են հայ ժողովրդի ազատագրական հույսերը և պայքարը, իսկ վկան միաժամանակ դիտվել է որպես հայրենիքի համար մարտնչող զինվոր։ Քրիստոնեական հավատի նահատակ, վկա և հայրենիքի համար զոհված մարտիկ հասկացություններն այնքան են նույնացվում, որ Եղիշեի երկում ազատագրական պայքարի հերոսները ներկայացվում են որպես վկաներ և օժտվում վերջիններիս հատկանիշներով։

---

16 Հմմտ. Է. Դ. Զրբաշյան. Գրականության տեսություն. Երևան, 1980, էջ 196։

Հայկական բուն վկայաբանական երկերից շատերի հերոսներն ազատագրական պայքարում զոհված հայ զորավարներ և զինվորներ են։ Օրինակ՝ Ատոմն ու նրա զինակիցները, որոնք Ավարայրի ճակատամարտից հետո շարունակում են պատերազմել պարսիկների դեմ[17], կամ՝ արաբական տիրապետության շրջանի ամենախոշոր համաժողովրդական ապստամբության (774—775 թթ.) մասնակիցներ Համազասպն ու Սահակը, որոնք 786 թ. արաբական խալիֆի հրամանով մահապատժի ենթարկվեցին։ Վերջիններիս վկայաբանության մեջ ուղղակի մատնանշվում է մահապատժի պատճառը. «Եւ տուեալ զնոսա ի բանտ կապանօք հանդերձ, յղէր (արաբական զորավարը— Ք. Տ.-Դ.) պատգամս առ նոսա զկարծեցեալ խորհուրդսն ապստամբութեան ի ձեռն այնր իրի բառնալ ի միջոյ. և պարգեւս և պատիւս մեծամեծս ընդունել նոցա յարքունուսս»[18]։

Հայերի ազատագրական տրամադրություններն ու իղձերը արտահայտություն են գտնում հերոսների մտորումներում և աղոթքներում։ Վահան Գողթնացին թախանձում է արաբական խալիֆին իրեն էլ թույլ տալ գերի հայերի հետ վերադառնալ Հայաստան. «Արձակեցէք, որ տեսանեմ զորշափութիւն աւերածոյ երկրին իմոյ հայրենեաց»[19],— ասում է նա։ Իսկ Համազասպը աղոթում է. «Քրիստոս փրկիչ աշխարհի, անցուսցես զյարձակումս թշնամեաց և խաղաղուսցես յեկեղեցի քո խաղաղութեամբ, որ ոչ անցանէ, զօրավարաց և զօրաց Հայաստան աշխարհիս բարեյաղթութեան շնորհս ընդդէմ պատերազմողացն շնորհեսցես և զբնակիչս երկրի դադարեցուսցես ի վրդովմանց հողմոյ հարաւային յուզմանց, որ խռովէ զմեզ...»[20]։ Նման օրինակները բազմաթիվ են։

Առաջին շրջանի հայ վկայաբանությունն ունի նույն նկարագիրը, ինչ և տվյալ ժամանակաշրջանի վարքագրությունը։ Այստեղ դիտվում է վկայաբանական, վիպական և պատմական ոճերի միահյուսվածություն, որի շնորհիվ վկայաբանություններն աչքի են ընկնում իրենց գեղարվեստականությամբ և բովանդակության հարստությամբ։ Վկաներն իսկական հերոսական գծերով օժտված գաղափարական կերպարներ են։ Վկայաբանության պատումը և կառուցվածքն ունեն կանոնական բնույթ, որը, սակայն, չի հանգեցնում սխեմատիզմի։ Ընդհակառակը, ձևը այստեղ նպաստում է հեղինակի նպատակի լիարժեք դրսևորմանը։

Թադեոսի և Սանդուխտի, Հռիփսիմյանց վկայաբանությունները, Գրիգոր Լուսավորչի վարքն ու վկայաբանությունը, Շուշանիկի, Վահան Գողթնացու վկայաբանությունները,— ահա այն լավագույն հուշարձանները, որոնք ներկայացնում են հայ վկայաբանության առաջին շրջանը։ Սրանք բոլորն էլ աչքի են ընկնում ինքնատիպությամբ ու հեղինակների անհատականությամբ և զուրկ են ավելի ուշ շրջանի հուշարձանների միակերպությունից և միաձևությունից։

Շնորհիվ այդ վկայաբանությունների, կարելի է ասել, հայ գրականությունն արդեն V դարից սկսած ունի դրամատիկ ստեղծագործություններ։ Որպես իսկական դրամատիկ ստեղծագործություն, իր թատերայնությամբ աչքի է ընկնում հայ վկայագրության լավագույն հուշարձաններից մեկը՝ Ագաթանգեղոյան Հռիփսիմյանց վկայաբանությունը։ Վկայաբանական հերոսի կերպարը այստեղ ձեռք է բերում վաղ շրջանի համար բնորոշ մոնումենտալություն ու ամբողջականություն։ Այն իսկական հերոսական կերպար է։ Հռիփսիմեն պատրաստ է զոհվել հանուն իր հավատի, որը նրան օժտում է գերբնական ուժով։ Այդ հիմնական պահանջը Ագաթանգեղոսը կարողացել է այնպես ներկայացնել, որ Հռիփսիմյանց վկայաբանությունը ընկալվում է որպես մի իսկական վիպական-դրամատիկ պատում։ Սկսած Հռիփսիմեի հայտնաբերման տեսարանից մինչև նրա վկայությունը երկը մեկը մյուսին փոխարինող գործողու-

17 Տե՛ս «Սոփերք», ԺԹ, էջ 69—82։

18 Նույն տեղում, ԺԲ, էջ 66։

19 Նույն տեղում, ԺԳ, էջ 22—23։

20 Նույն տեղում, ԺԲ, էջ 80։

թյան և գունեղ պատկերների մի շարան է. ժողովրդի ու նախարարների իրարանցում, երբ նրանց հասնում է Հռիփսիմեի գնդեցկության համբավը («..ընթացեալք ի տեսանել... զմիմեանս դիզանէին ի միմեանց վերայ»[21] և այլն), երկնքի որոտ և ժողովրդի ահաբեկվածության նկարագրություն («...բազմաց ընդոստացեալ, անգուշեալ, բազում երիվարք հեծելոց յահէ անտի՝ զբաղումս ընկեցեալ և զբազումս առաթուր հարեալ սատակէին...»[22]), աղաղակող, աստծուց զորություն խնդրող Հռիփսիմեն, որին բռնի «մերթ վեյամբարձ, մերթ ի քարշ» ապարանք են տանում, նրա հետևից ընթացող ժողովրդի ոտնաձայնի դղրդյուն («ամենայն ամբոխին զկնի նորա փողեալ՝ թնդէր երկիրն ի բազմութենէ անտի»[23]), Հռիփսիմեի և Տրդատի պայքարը և դրան ֆոն հանդիսացող՝ ապարանքում և փողոցում հարսանյաց խնջույքի նկարագրությունը, և վերջապես՝ Տրդատին հաղթած Հռիփսիմեն, որն ընթանում է «բարձրաւանդակ յաւագին տեղի մի», ուր և վկայում է՝ այստեղ ամեն ինչ պատկերված է շարժման, գործողության մեջ[24]։

Ագաթանգեղյան Հռիփսիմյանց վկայաբանությունը իր հյութեղ և պատկերավոր լեզվով, վիպական ոճի օգտագործմամբ, գործողության դրամատիզմով և սուր զարգացմամբ, հույզերի առարկայական պատկերմամբ, պատումի սխեմատիզմի բացակայությամբ հայ վկայաբանության մեջ իր հավասարը չունի։

Շուշանիկի և Վահան Գողթնացու վկայաբանությունները՝ այդ ժանրին պատկանող երկու մյուս լավագույն հուշարձանները, պատումի ներքին դրամատիզմի հետ միաժամանակ աչքի են ընկնում բովանդակության և կերպարների հարստությամբ։

Շուշանիկի կերպարը բարդ է։ Վկայաբանության կոնֆլիկտը հեռու է սոսկ հավատացյալի և անհավատի բախում լինելուց։ Այստեղ քրիստոնեական և պրոստեստանական բարոյականության ու կրոնների հակադրությունը վկայագիրը արտահայտել է ընտանեկան դրամայի միջոցով, որի հիմքում ընկած է Շուշանիկի ամուսնու՝ Վազգենի դավանափոխության հարցը և դրա հետևանքով ամուսինների միջև ծագած հակասությունը։ Շուշանիկի կերպարը շատ ավելի հարուստ է, քան կարող է լինել միայն հավատի համար զոհվողի հերոսական կերպարը։ Նրա վարքագիծը թելադրվում է վիրավորված կնոջ, երեխաների մոր, հայրենասերի և հավատացյալի զգացմունքներով[25]։ Հավատը տվյալ դեպքում մարմնավորումն է այն բոլորի, ինչը Շուշանիկի համար թանկ է որպես հայի։ Նա դատ թելերով է կապված կյանքի և նրա վայելքների հետ։ Հենց այդ պատճառով նրա վկայությունն ավելի դժվար է, բայց և այս դեպքում ավելի տարողունակ է նահատակության հասկացությունը։ Դավանափոխ լինել նշանակում է ապրել օտարների օրենքներով և հավատով սահմանված կենցաղով (բազմակնություն, արյունապղծություն և այլն), ապրել «անդառնալի մեղքերով» լեցուն կյանքով, դավաճանել այն ամենին, ինչի համար պայքարել են նրա պապերը՝ Հայաստանի լուսավորիչները, և ինչի համար զոհվել է նրա հայրը՝ Վարդան Մամիկոնյանը։

Այդ նույն գաղափարին է իրեն նվիրում նաև Վահան Գողթնացին, որի առաջ մանկության հասակում բռնի դավանափոխությունը և արաբական արքունիքում կրթություն ստանալը ճանապարհ էին բացել դեպի հարստություն, իշխանություն և ազատություն։ Սակայն նա վերադառնում է Հայաստան և, ականատես դառնալով իր հայրենակիցների իրավազուրկ վիճակին, այլևս հանցագործություն է համարում դավանափոխության գնով ազատ կյանք վայելել և ապրել փսիխիության մեջ։ Վահան Գողթնացու վկայաբանությունը

---

21 Ագաթանգեղոս, էջ 89։

22 Նույն տեղում, էջ 95։

23 Նույն տեղում, էջ 96։

24 Իրականության վիպական պատկերման մասին տե՛ս Հ. Մամիկոնյան. Մարդը և նրա կերպարը գրականության մեջ. Երևան, 1966, էջ 113—180։

25 Տե՛ս Մ. Աբեղյան. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 379—380։

գրված է ժողովրդական վեպի ոգով, ուր «ամեն ինչ հասարակ ոճով պարզաբանվում է միայն այուժեով և գործողությամբ, որը ծավալվում է մեր առաջ»[25]։ Վահանի կերպարի բացահայտման համար հեղինակը օգտվում է ժողովրդական վեպին հատուկ մի այլ գեղարվեստական հնարանքից՝ նույնանման անցքերի կրկնությունից։ Նրա տառապանքները Հայաստանում, յուրաքանչյուր վայրից վտարվելը,— այդ բոլորը նկարագրված են հաջորդաբար, որպես մշտական պայքար սատանայի դեմ, որը Վահանից հեռացնում է բոլոր հարազատներին և հայրենակիցներին։ Սակայն միաժամանակ Վահանի երկար և միատեսակ տառապալի թափառումները Հայաստանում իրողություններ են, որոնք արտացոլում են ռեալ պատմական իրականությունը, արաբական լծի ծանրությունը և հայ բնակչության իրավազրկությունն ու ահաբեկվածությունը։ Այդպիսի պատումը և ոճը թույլ են տվել Վահան Գողթնացու վկայությունը պատկերել կրոնական անհանդուրժողականության, սոցիալական լծի և հետապնդումների հենքի վրա։

Նահատակության մասնավոր փաստը այս լավագույն հուշարձաններում ներկայացվում է որպես որոշակի քաղաքական պայմանների հետևանք։ Ամբողջ իրադրության և նահատակության փաստի, պատճառի և հետևանքի միահյուսվածությունն ու փոխադարձ կապը, հերոսների ազգային արժանապատվության գիտակցության առկայությունը, իրենց այդ բարձր գաղափարին նվիրաբերելը,— ահա ընդհանուրը, բնորոշը Շուշանիկի և Վահան Գողթնացու վկայաբանությունների համար։

Նշենք, որ վկայաբանությունների այդ յուրահատկությունը՝ ազգայինազատագրական երանգավորումը, հատկապես ցայտուն արտահայտություն է գտել հայ վկայաբանության V—X դդ. հուշարձաններում, այսինքն այն շրջանում, երբ հայերը դեռ վերջնականապես չէին զրկվել պետականությունից և դեռ գոյություն ուներ հայերի ռազմական ուժը՝ նախարարական դասը, որը ակտիվ պայքար էր մղում նվաճողների դեմ։ Հենց այդ ժամանակաշրջանի երկերում վկաները բարձր գաղափարական հերոսներ են, հաճախ նախարարական և զինվորական դասի ներկայացուցիչներ։ Այստեղ է, որ ուղղակի արտահայտություն են գտնում հերոսների ազատագրական հույսերն ու երազանքները, վկայաբանության իսկական պատճառը։

Ժանրային առումով VI—X դդ. վկայաբանության վերջնական ձևավորման շրջանն են։ Բացի Վահան Գողթնացու վկայաբանությունից (VIII դար), մնացած բոլոր վկայաբանությունները բավական միակերպ են։ Հետզհետե հերոսների կերպավորման մեջ ուժեղանում է վերացականության միտումը, նրանք կորցնում են անհատականության վերջին նշույլները և վերածվում միանման պայմանական կերպարների։ Բոլոր վկայաբանությունները, որպես կանոն, հագեցված են աստվածաշնչային խրատներով և պատվիրաններով, որոնք միահյուսվում են վկաների պատասխանների հետ։ Հնագույն վկայաբանությունների օրինակով պատումի մեջ հիմնական ուշադրությունը կենտրոնացված է վկայության փաստի վրա։ Ամենայն մանրամասնություններով նկարագրվում են հերոսի տոկունությունը և արհամարհանքը մահվան հանդեպ։ Հերոսի կերպավորման համար հեղինակները դիմում են ավետարանական ասույթների ուղղակի մարմնավորման, հաճախ նույնիսկ պատճենավորում են Քրիստոսի խաչելության ավետարանական նկարագրությունը (Եղիդբուզիդի, Դավիթ Դվնեցու վկայաբանություններ)։ VI—X դդ. ժանրը ներկայանում է իր «մաքուր» տեսքով (Եղիդբուզիդի[27], Դավիթ Դվնեցու[28], Համազասպի և Սահակի վկայաբանությունները)։

---

26 Նույն տեղում, էջ 513։

27 Տե՛ս «Վարք և վկայաբանութիւնք սրբոց, հատընտիր քաղեալք ի ճառընտրաց». հ. Բ, Վենետիկ, 1874, էջ 124—130։

28 Տե՛ս «Սոփերք», ԺԲ, էջ 85—96։

Սակայն հայ վկայաբանությունը երկար չկարողացավ ընթանալ այդ ուղիով։ Կանոնականությանը հիմնականում հետևեցին գովասանական հռետորական հուշարձանները։

XI—XV դդ. վկայաբանությունը թևակոխեց իր զարգացման երկրորդ շրջանը։ Եթե այն համեմատելու լինենք նույն ժամանակաշրջանի վարքագրության հետ, ապա կտեսնենք, որ նրա զարգացումը ընթացել է փոքր-ինչ այլ ճանապարհով։ Եթե վարքագրության մեջ XI—XV դդ. երկու ուղղություններից (գրքային-հռետորական և «ժողովրդական») գերիշխողը գրքայինն էր[29], ապա վկայաբանության մեջ այդ երկրորդ ուղղությունը ընդհանուր վկայաբանական հուշարձանների շարքում շատ քիչ տեղ է գրավում։ Եվ այն իր արտահայտությունն է գտել գլխավորապես հուշարձանների գովասանական առաջաբաններում[30]։ Հռետորական վկայաբանությունները կամ առաջաբանները հիմնականում գրական խոշոր գործիչների գրչի արգասիք են։ Դրանց մեծ մասը գրված է XV դարի ճանաչված հեղինակներ Գրիգոր Խլաթեցու և Առաքել Բաղիշեցու կողմից, որոնք, ի դեպ, հայտնի են նաև իրենց ներբողյաններով։

XII դարից սկսած հայ վկայաբանության համար բնորոշը «ժողովրդական» տիպի հուշարձանների տարածումն է։ Հայ ժողովրդի հետզհետե վատթարացող վիճակի հետ աճեց վկայաբանությունների գործնական նշանակությունը, ընդլայնվեց նրանց կիրառության ոլորտը։ Բարբարոսական արշավանքները, ավերածությունները, կոտորածները, բռնագաղթերը և մահմեդական տարրի աճը հատկապես XIV—XV դդ. երկրում ստեղծել էին մի այնպիսի վիճակ, երբ ազգային գոյության և սեփական դավանանքի պահպանությունը դարձել էր առօրյա խնդիր։ Պատահական չէ, որ մահմեդականները այս շրջանից սկսած դառնում են հայ վկայաբանության գլխավոր գործող անձերից մեկը։ Իսկ վկաների սոցիալական շրջանակը ընդլայնվում է։ Վաղ շրջանի ազնվական-իշխանական ծագում ունեցող վկաներին (Սանդուխտ, Գրիգոր Լուսավորիչ, Հռիփսիմե, Շուշանիկ, Վահան Գողթնացի և ուրիշներ) փոխարինում են ժողովրդի լայն զանգվածների ներկայացուցիչները՝ հասարակ դյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, որոնց վրա էր ընկնում օտարի լծի ամենածանր բաժինը։ Վկաների շարքում զգալի տեղ է սկսում գրավել նաև հոգևորականությունը, որը պետականության բացակայության պայմաններում հայ ժողովրդի համար մարմնավորում էր իշխանության գաղափարը և ամենամեծ հեղինակությունն էր վայելում։

Ընդլայնվում է վկայաբանությունների հեղինակների շրջանակը։ XII դարից սկսած վկայաբանությունների հեղինակները ականատես և ականջալուր քահանաներ են, վարդապետներ կամ պարզապես գրիչներ, վկային ճանաչող մարդիկ[31]։ Դրա շնորհիվ նշված ժամանակաշրջանի վկայաբանությունները ընդհանրության շատ եզրեր ունեն հիշատակարանների հետ։ Գերակշռում են ժողովրդական խոսակցական լեզվով գրված հուշարձանները։ Սակայն այս վերջին երևույթը, եթե մի կողմից վկայաբանության շրջանակի ընդլայնման հետևանք էր, ապա մյուս կողմից՝ գիտակցված վերաբերմունքի արդյունք։ Պարզ լեզվով գրված վկայաբանությունները նպատակ էին հետապնդում հաստատակամության և հավատարմության օրինակ ծառայել գոյության անողոք կռվի մեջ գտնվող միջնադարյան ընթերցողի համար, բարձրացնել նրա ոգին և դրանով խափանել օտարանալու, ձուլվելու վտանգը։

---

29 Այդ մասին տե՛ս Ք. Տեր-Դավթյան. 11—15-րդ դդ. հայ վարքագրությունը. Երևան, 1980, էջ 105—126։

30 Մեզ հայտնի է միայն երեք վկայաբանություն՝ ամբողջությամբ գրված գովասանական-ներբողական ոճով։ Թեոդորոս Կեսարացու (1204 թ.), հեղինակ՝ Գրիգոր, Ավագ Սաղմոստեցու (1396 թ.) վկայաբանությունները, Ստեփանոս վարդապետի և Պետրոս քահանայի վկայաբանությունը (1424 թ.), հեղինակ՝ Առաքել Բաղիշեցի (տե՛ս «Հայոց նոր վկաները», էջ 73—93, 152—164, 245—260)։

31 Անանուն վկայաբանությունները մեծ մասամբ XV դարի երկրորդ կեսին են վերաբերում։ Տե՛ս «Հայոց նոր վկաները», №№ 43, 45, 46, 47, 49, 52 և այլն։

Ամենակարևոր փոփոխությունը, վաղ շրջանի հուշարձանների համեմատությամբ, պատմական ոճի և տարրի գերիշխումն է։ Ձևական և ժանրային այլ տիպի փոփոխությունները կապված են վկայաբանությունների մեջ պատմականի, իրական կյանքի ավելի լայն թափանցման փաստի հետ։ Կանոնական են դառնում պատմական բնույթի առաջաբանները[32], որոնք հատուկենտ հանդիպում էին նաև ավելի վաղ շրջանի հուշարձաններում։ Այդպիսի առաջաբանները հաճախ վերածվում են ժամանակի քաղաքական, սոցիալական իրադրությունը պատկերող պատմական ակնարկների։

XI—XV դդ. վկայաբանություններում բուն պատումի մեջ վկայի դատաքննության, տանջանքների և մահվան նկարագրությունները շարունակում են մեծ տեղ գրավել, սակայն նրանք շատ ավելի սխեմատիկ բնույթ են ստանում, քանի որ հերոսներն էլ վկայաբանական կերպարի առումով «մանրացել» են, այլևս վաղ շրջանի գաղափարական մոնումենտալ և ամբողջական կերպարներ չեն, որոնք իրենց ողջ էությամբ գիտակցում էին վկայության իմաստը։ Եթե վաղ շրջանի գործերում վկայի կատարելության հասնելու ջանքերը, նրա ջերմեռանդությունը և վկայելու ձգտումը մանրամասն նկարագրվում են՝ նպաստելով գեղարվեստական ամբողջական կերպարի ստեղծմանը, ապա այժմ հեղինակները դրանք պարզապես արձանագրում են։ Փոխվել է նաև կոնֆլիկտի բնույթը։ Նրա հիմքում այժմ ընկած են առօրյա, կենցաղային դեպքեր՝ քրիստոնյայի բռնի ամուսնության փորձ մահմեդական կնոջ հետ[33], քրիստոնյայի կողմից պարտքը վճարելու անկարողություն[34], մահմեդական իշխանի, տիրակալի սանձարձակ վերաբերմունք հայ կնոջ հանդեպ և վերջինիս վկայությունը իր պատիվը պաշտպանելու համար[35], հարկահավաքության չարաշահումներ, եկեղեցու կողոպուտ[36] և պարզապես մի աննշան պատրվակ քրիստոնյային բռնի դավանափոխ անելու համար։ Այս բոլոր դեպքերում էլ փրկության միակ պայմանը դավանափոխությունն էր, այսինքն մի նոր բռնություն։

Վկաների ավելի «մարդկայնացմանը» նպաստում է նրանց իրական կյանքի, կենցաղի պայմաններում պատկերելը։ Կանոնական բնույթ է ստանում մահմեդականների գերիշխանության և լծի տակ ապրող հայ ժողովրդի կյանքում լայն տարածում գտած երևույթների արտացոլումը վկայաբանություններում (օրինակ՝ խոշտանգված վկային բնակավայրի միջով ման ածելը՝ քրիստոնյաներին ահաբեկելու համար)։ Դա արդեն մահմեդական բնակչության՝ իշխող տարրի և քրիստոնյաների իրավական վիճակը բացահայտող «կյանքի շտամպ» էր։ Վկան այլևս հազվադեպ, անհասանելի անձնավորություն չէ, այլ պարզապես իշխողների զոհ։ Այդպես է ընկալում վկային ժողովուրդը, որի վերաբերմունքը նրա հանդեպ փոխվել է, կրճատվել է նրանց միջև եղած տարածությունը։ Եթե վաղ շրջանի վկայություններում ժողովուրդը հեռվից է դիտում վկայի սխրանքը, ընկալում այն որպես ընտրյալ մի էակի արարք, ապա այժմ վկան իր շարքերից է։ Նրա հարազատները, յուրայինները ամեն կերպ աշխատում են փրկության համար հնար գտնել։ Խոսրով Գանձակեցու մայրը թախանձում է. «Ողորմեա թշուառացեալ մօրս և մի մատնիր ի ձեռս արիւնարբու գազանացն»[37], իսկ հայրը համոզում է. «Յանձն առ, որդեակ, առաջի տենին և միայն զերծիր ի տանջանացդ և ի մահուանէդ։ Եւ տարցուք զքեզ

32 Տե՛ս Խոսրով Գանձակեցու (1167 թ.), Դավիթ Դվնեցու (1170 թ.), Թեոդորոս Կեսարացու (1204 թ.), Գրիգոր Բալուեցու (1290 թ.), Գրիգոր Կարնեցու (1321 թ.) վկայաբանությունները («Հայոց նոր վկաները», №№ 3, 4, 7, 13, 16)։

33 Տե՛ս Խոսրով Գանձակեցու վկայաբանությունը («Հայոց նոր վկաները», № 3)։

34 Տե՛ս Թեոդորոս Կեսարացու, Ամենավագ Դերջանցու վկայաբանությունները (նույն տեղում, №№ 7, 17)։

35 Տե՛ս Թամար Մոկացու վկայաբանությունը (նույն տեղում, № 27)։

36 Տե՛ս Գրիգոր Բալուեցու, Գրիգոր Կարնեցու վկայաբանությունները (նույն տեղում), №№ 13, 16)։

37 «Հայոց նոր վկաները», էջ 26։

յաշխարհն Վրաց, և անդ համարձակութեամբ պաշտեա զՔրիստոս»[38]։ Նույնն են ասում Հովսեփ Դվնեցու մերձավորները, իսկ ժողովուրդը, երբ նրան շըղթայակապ ման են ածում, նրա համար փրկագին է հավաքում։ Համեմատենք Գայանեի հետ և հիշենք, թե ինչպես է նա հորդորում և համոզում Հռիփսիմեին՝ աներեր մնալ և չվախենալ տանջանքներից, որպեսզի արժանանա երկնային արքայության[39]։

XI—XIV դդ. վկայաբանություններ թափանցած նոր տարրերը, նրանց հետ կապված փոփոխությունները գնալով խորանում են հետագա դարերի հուշարձաններում։ Հեղինակները, մոտ կանգնած լինելով իրենց հերոսներին, ականատես դառնալով նրանց վկայությանը, երբեմն այնպիսի մանրամասներ են հաղորդում նրանց արտաքինի, հագուստի և արարքների մասին, որ հակասում են վկայի կերպարի կերտման վերացականության, ընդհանրացման սկզբունքին։ Այդ տեսակետից խիստ ուշագրավ է Սելիքսեթի և Կարապետ Վանեցու վկայաբանությունը, ուր հեղինակը մատնանշել է իր հերոսի բնական արատը. «Իսկ նա իւրովի վազեաց, թէպէտ և կաղ էր»[40]։ Իսկ Գրիգոր Խլաթեցին, ցանկանալով ընդգծել իր հերոսուհու պարկեշտությունն ու կանացի ամոթխածությունը, գրում է, որ վերջինս կարել էր իր զգեստի օձիքն ու փեշը, որպեսզի տանջանքների ժամանակ չերևան նրա մարմինը և մերկ ոտքերը[41]։

Դիտվում է բանավոր ստեղծագործությանը հատուկ արտահայտչամիջոցների, պարզ խոսակցական լեզվի, աշխարհիկ կենցաղային սյուժեների ավելի լայն օգտագործում։ Մոտավորապես XV դարից սկսած վկայաբանություններում կարելի է նկատել ժանրային կանոնականության կաշկանդումից խուսափելու ուժեղ միտում՝ կառուցվածքային սխեմայի խախտումներ, վկայաբանությանը բնորոշ ժանրային հատկանիշների անտեսում կամ անհետացում, կոնֆլիկտի հիմք հանդիսացող ավանդական հակամետ կողմերի տեղաշարժեր և, ամենակարևորը, վկայաբանական հերոսի կերպավորման սկզբունքի՝ իդեալականացման փոխարինում պատմական ճշմարտությամբ։ Վկայաբանությունները կորցնում են իրենց դասական դիմագիծը, շատ ավելի են պարզեցվում։ Հետզհետե վերանում են նաև պատմական բնույթի առաջաբանները։ Վկայաբանությունները անմիջապես սկսվում են վկայով. «Սա էր ի քաղաքէն Յամթայ»[42], «Սա էր հաւատովն քրիստոնեայ»[43], «Սա էր ի քաղաքէն Ղարսայ»[44] և այլն։ Դատաքննության, վկայի տանջանքների և մահվան նկարագրությունները սկսում են շատ քիչ տեղ գրավել, հաճախ պարզապես արձանագրվում են։ Բացակայում են սուր բախումները, երկխոսությունները վկայի և տանջողների միջև։

Կոնֆլիկտը կորցնում է սրությունը։ Թե՛ մահմեդականները և թե՛ քրիստոնյաները դավանափոխության հարցին նախկին բծախնդրությամբ չեն վերաբերվում։ Վանեցի կնոջը, որին կնության էր վերցրել մի այրիացած քուրդ, մահմեդականները ցանկանում են դավանափոխ անել։ Իմամները համոզում են նրան վերցնել երեք քար և նետել քրիստոնեական եկեղեցու վրա։ Եվ երբ այդ անում է, նրա դավանափոխության հարցը համարվում է փակված։ Նույնը կատարվել է նաև մահվան նկարագրության հետ։ Չկա քրիստոնյայի տանջանքների մանրամասն նկարագրություն։ Այժմ նրան դուրս են բերում քաղաքից և քարկոծում։ Մի շարք վկայաբանություններում նույնիսկ վերանում է հրաշքով և տեսիլքով ուղեկցվող միակերպ վերջաբանը։ Վկայի մահը պարզապես արձանագրվում է. «Եւ նա այսպէս քարի հաւատով կատարեցաւ ի Քրիստոս, կինն Յիմար, զի այս էր անուն նորա։ Գործեցաւ այս ի թուականիս

38 Նույն տեղում։

39 Տե՛ս Ագաթանգեղոս, էջ 90—91։

40 «Հայոց նոր վկաները», էջ 202։

41 Նույն տեղում, էջ 195։

42 Նույն տեղում, էջ 360։

43 Նույն տեղում, էջ 484։

44 Նույն տեղում, էջ 528։

Հայոց ՊԿԷ (1418) ամին»[45], կամ «Կատարեցաւ սուրբ նահատակն Վարդան ի թուականութեանս Հայոց ՊՀ (1421)...»[46]։

Որոշ վկայաբանություններում դրսևորվում է ավանդականության խախտման մի այլ հետաքրքիր երևույթ՝ կոնֆլիկտի տեղաշարժ։ Հակասությունը երբեմն ծագում է ոչ թե քրիստոնյայի և այլակրոնի, այլ իրենց իսկ քրիստոնյաների միջև, իսկ մահմեդականները հանդես են գալիս միայն որպես ուժեղ կողմի աջակից։ Այսպես, օրինակ, իրենց դավանակիցների ամբաստանության զոհն են դառնում Ստեփանոս քահանան[47] և Զմշկածագցին[48]։

XVI—XVII դդ. վկայաբանական գրականությունը դեռևս շարունակում է գոյատևել։ Դրանցից, որպես հավաստի սկզբնաղբյուրներից, մեծապես օգտվում են ժամանակի պատմիչները։ Վկայաբանությունները պատմական պատումներ են՝ կենցաղային տեսարանների հյութեղ և կենդանի նկարագրություններով, իրական մարդկային հարաբերությունների և կյանքի դրսևորումներով։ Վկայաբանության լայն ասպարեզ դուրս գալը, այլ հատկանիշների ձեռք բերումը միաժամանակ ժանրի քայքայման, անկման նշան էր։

РАЗВИТИЕ ЖАНРА МАРТИРОЛОГА В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

К. С. ТЕР-ДАВТЯН

(Резюме)

В статье рассматриваются особенности мартиролога — одного из наиболее распространенных жанров армянской средневековой литературы. Освещаются пути и своеобразие его развития в конкретных условиях армянской действительности. Самой характерной чертой армянских мартирологов является их патриотическая направленность, тесная связь с жизнью. Особенно яркое проявление она нашла в памятниках V—X вв., когда были созданы наиболее примечательные и ценные армянские мученичества. Примерно к X в. жанр мартиролога кристаллизуется, выступает в своем «чистом» виде. Последующий этап его развития, XI—XV вв., характеризуется расширением сферы применения мартирологов, демократизацией памятников. С XV в. наблюдается отход от канонического повествования, разрушение традиционной композиции, отступление от принципа идеализации в изображении героя. Мученичества XVI—XVII вв. это уже полностью исторические повествования, сохранившие лишь мартирологическую канву. Выход мартирологии на широкую арену, приобретение других жанровых черт были признаком упадка, разрушения жанра.

---

45 Նույն տեղում, էջ 227։

46 Նույն տեղում, էջ 242։

47 Տե՛ս նույն տեղում, էջ 184—185։

48 Տե՛ս նույն տեղում, էջ 205—207։